«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 4452 «18» 03 2021թ.

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԵՊՀ-Ի ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԵՊՀ-ի ռեկտորի պաշտոնակատարի ս/թ մարտի 16-ի №46 §36 հրամանը՝

Հրամայում եմ

1. Ս/թ մարտի 19-ից ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում շարունակել բոլոր կրթական ծրագրերով ուսումնական գործընթացն իրականացնել առկա և առցանց ձևերի համադրությամբ (դասախոսություններն անցկացնել առցանց եղանակով, գործնական պարապմունքներն անցկացնել առցանց կամ առկա եղանակով):

2. Առկա և առցանց դասընթացները կազմակերպել համաձայն դասացուցակի: Դասերի սկիզբը սահմանել 9^{30} –ն: Դասերի տևողությունը սահմանել 80 րոպե՝ 5 րոպե դասամիջոցով:

3. Սահմանել, որ

1) առկա և առցանց դասընթացների ուսումնական նյութերը ուսանողներին պետք է տրամադրվեն ակադեմիական խմբերի համար ձևավորված էլեկտրոնային հասցեներով,

2) առցանց դասընթացներն ու քննությունները (ստուգարքները) պետք է անցկացվեն բացառապես համալսարանական ZOOM հարթակներում,

3) առկա և առցանց ձևերով դասերի անցկացման օրերը չպետք է համընկնեն:

4. Կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) տարածման կանխարգելման նպատակով կառուցվածքային ստորաբաժանումներում հակահամաճարակային կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

5. Ուժը կորցրած համարել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատարի ս/թ մարտի 2-ի №32 §8 հրամանը:

6. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին և ուսանողներին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ